Հասցեատեր՝
Աչաջուր համայնքապետարան
Էլեկտրոնային փոստի հասցե՝ Faachajur.armen13@mail.ru

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04.04.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նազելի Արսենյան
	Նարեկ Ադամյան
	Հենրիկ Խաչատրյան
	Արփի Լազարյան
	Դավիթ Բակլաչյան

Վարույթ՝ 16Բ-042

Խախտում՝

1. «Աչաջուր-09» թիմի ֆուտբոլիստ Մելսիկ Ալավերդյանի (36683) կողմից բռնարարքը մրցակցի նկատմամբ (Հավելված 1 Զ, 15-րդ կետ)
2. «Աչաջուր-09» թիմի ֆուտբոլիստ Վալերի Դավթյանի (42140) կողմից բռնարարքը մրցակցի նկատմամբ (Հավելված 1 Զ, 15-րդ կետ)
3. Դաշտի տեր թիմի կողմից խաղի ժամանակահատվածում մարզադաշտում կարգ ու կանոն չապահովելը, երկրպագուների կողմից անհարգալից արարքներ թույլ տալը (Հավելված 1 Ե, 22-րդ կետ)

Առաջնություն՝ ՀՀ ֆուտբոլի 2024-2025թթ. մինչև 16տ. պատանեկան առաջնություն

Խաղ՝ «Աչաջուր-09» - «Արարատ-09», 28.03.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Աչաջուր-09» թիմի ֆուտբոլիստ Մելսիկ Ալավերդյանին (36683) որակազրկել 3 (երեք) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մարտի 28-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): Աչաջուր համայնքապետարանին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով:
2. «Աչաջուր-09» թիմի ֆուտբոլիստ Վալերի Դավթյանին (42140) թիմի ֆուտբոլիստ Մելսիկ Ալավերդյանին (36683) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մարտի 28-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը

(այդպիսիք լինելու դեպքում)։ Աչաջուր համայնքապետարանին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով։

3. Աչաջուր համայնքապետարանին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։